



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2015թ.

N 88-Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2015 թվականի սեպտեմբերի 13-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական հանձնաժողովների ծախսերի նախահաշիվները՝ 81 941 200 (ութսունմեկ միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով ընդհանուր գումարով՝ համաձայն N1 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ սույն որոշմամբ ընտրությունների համար նախատեսված միջոցներն օգտագործել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած նախահաշիվներին համապատասխան:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման՝

- 1) հանրային իրազեկման և շահագրգիռ պետական մարմիններին ու պատասխանատու կատարողներին առաքման կազմակերպական աշխատանքները,
 - 2) կատարման վերահսկումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ

Հ/Հ	Ընտրական հանձնաժողովների անվանումը	Ծախսերը (հազ. դրամ)
1	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (հավելված N1/1)	13 653,2
2	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/2)	9 750,0
3	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/3)	10 483,0
4	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրուրի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/4)	8 578,0
5	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/5)	11 286,0
6	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/6)	8 300,0
7	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/7)	4 137,0
8	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/8)	3 072,0
9	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողով (հավելված N1/9)	12 682,0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	81 941,2

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ